ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 522-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի N 1940-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, ինչպես նաև «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 4-րդ մասերով՝

1. Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի դեկտեմբերի 19-ի «Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կանոնադրությունը հաստատելու մասին» N 1940-Լ որոշմամբ (այսուհետ՝ որոշում) հաստատված՝ Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կառուցվածքում՝

1) նմուշառման և լաբորատոր փորձաքննությունների կազմակերպման բաժինը միացնել Երևան-«Զվարթնոց» օդանավակայան սահմանային հսկիչ կետին.

2) Այրում-Բագրատաշեն սահմանային հսկիչ կետն անվանափոխել Այրում-Բագրատաշեն սահմանային պետական վերահսկողության բաժնի.

3) Բավրա-Գյումրի սահմանային հսկիչ կետն անվանափոխել Բավրա-Գյումրի սահմանային պետական վերահսկողության բաժնի.

4) Գոգավան-Պրիվոլնոյե սահմանային հսկիչ կետն անվանափոխել Գոգավան-Պրիվոլնոյե սահմանային պետական վերահսկողության բաժնի.

5) Ագարակի սահմանային հսկիչ կետն անվանափոխել Ագարակի սահմանային պետական վերահսկողության բաժնի.

6) Երևան-«Զվարթնոց» օդանավակայան սահմանային հսկիչ կետն անվանափոխել Երևան-«Զվարթնոց» օդանավակայան սահմանային պետական վերահսկողության բաժնի.

7) սահմանային հսկիչ կետերի համակարգման բաժինն անվանափոխել սահմանային պետական վերահսկողության համակարգման բաժնի:

2. Այդ կապակցությամբ որոշմամբ հաստատված հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 26-րդ կետում՝

ա. 1-ին ենթակետի «է» պարբերությունն ուժը կորցրած ճանաչել,

բ. 1-ին ենթակետի «ը» պարբերությունում «հսկիչ կետերի» բառերը փոխարինել «պետական վերահսկողության» բառերով,

գ. 2-րդ ենթակետի «ա», «բ», «գ», «դ» և «ե» պարբերություններում «հսկիչ կետ» բառերը փոխարինել «պետական վերահսկողության բաժին» բառերով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երևան

16.05.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ